«ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ» ԱՄԲԻՈՆԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԸՍՏ ԱՄԲԻՈՆԻ 2020-2025 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ

Համառոտ տեղեկատվություն ամբիոնի վերաբերյալ

Դասընթացներ

«Սոցիալական բժշկություն» ամբիոնը գործում է «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» ֆակուլտետների կազմում անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով:

Ամբիոնն իրականացնում է հետևյալ մասնագիտական առարկաների դասավանդումը՝ «Ինֆեկցիոն հիվանդություններ», «Համաճարակաբանություն», «Ֆթիզիատրիա», «Իմունոլոգիա, կլինիկական իմունոլոգիա», «Արտակարգ իրավիճակների բժշկություն», «Հանրային առողջություն և առողջապահություն», «Հիգիենա», «Բժշկական հոգեբանություն», «Ընդհանուր հոգեբանություն»:

Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

Ամբիոնն ապահովված է համապատասխան մասնագետներով և 2021-2022 ուսումնական տարում ունեցել է թվով 8 աշխատակից /1 հ. գ.թ./:

Պրոֆեսորադասախոսական կազմի միջին տարիքը՝ 37 տարեկան:

2021-2022 ուս.տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծավալը կազմել է 1680 ժամ: Դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածությունը կազմել է 1780 ժամ:

Նշեմ նաև, որ առաջին կուրսի դասընթացների նոյեմբեր ամսին սկսվելու պատճառով՝ դասավանդող դասախոսների ծանրաբեռնվածությունը և առարկաների ծավալը կազմվում է առանձին, ըստ որի ծանրաբեռնվածությունը կազմում է 107 ժամ, իսկ ծավալը՝ 150:

2021-2022 ուստարում ԱԲՀ-ի ղեկավարությունը, հաշվի առնելով օտարերկրյա ուսանողների խնդրանք-դիմումը «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների ուսումնական պլաններում ընդգրկված Ավանդական բժշկության կրթաբլոկի դասընթացներին հատկացված կրեդիտների վերաբերյալ, ձևավորել է աշխատանքային խումբ ուսումնական պլանների վերանայման նպատակով: Կատարվել է ԱԲՀ-ի ընդհանուր պլանի փոփոխություն, որից ելնելով կատարվել են նաև փոփոխություններ Բուժական գործ և Ստոմատոլոգիական

ֆակուլտետի ուսումնական պլանում՝ թե՞ կրեդիտային համակարգում, թե՞՝ առարկաներին հատկացվող ժամաքանակում: Վերը նշված փոփոխությունների պատճառով 2021-2022 ուստարվա հունվարին կազմվել է անցումային ուսումնական պլան, ըստ որի դասախոսների ծանրաբեռնվածությունը կազմել է 1292 ժամ, իսկ դասընթացների ծավալը 1410 ժամ:

2021-2022 ուստարվա ապրիլ ամսին՝ §Մայր Թերեզա¦ ԲՈՒՀ-ի փակվեկու պատճառով ԱԲՀ –ն կազմակերպեց ուսանողների ընդունելություն վերը փակված ԲՈՒՀ-ից: Ուսումնական գործընթացը §Սոցիալական բժշկություն¦ կազամկերպելու նպատակով կազմվեց օպերատիվ ուսումնական պլան: Ըստ որի ընդունված ուսանողներին դասավանդող դասախոսների ծանրաբեռնվածությունը կազմել է 860 ժամ, իսկ ծավալը 1170:

Ամբիոնի ուսումնագիտական ռեսուրսները

«Սոցիալական բժշկություն» ամբիոնի առարկաները դասավանդվում են ԱԲՀ-ի գլխավոր մասնաշենքի հատուկ կահավորված լսարաններում, «Նորք ինֆեկցիոն հիվանդանոց» բժշկական կենտրոնում:

Հատուկ կահավորմամբ լսարանները, հիվանդանոցային պայմաններում դասընթացներ կազմակերպելը՝ հնարավոր են դարձնում լիարժեք անցկացնել թե տեսական և թե գործնական պարապմունքները: Ամբիոնը հագեցած է նաև տեսական գրականությամբ, որը հասանելի է ուսանողներին: Կազմվում են նաև յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ դասախոսություններ, տեսաներկայացումներ և ուղարկվում ուսանողներին:

Ուսուցման մեթոդները ամբիոնում՝

- Դասախոսություններ,
- Սեմինար, գործնական պարապմունքներ,
- Լաբորատոր աշխատանքներ,
- Թեստային, գրավոր, բանավոր հարցումներ,
- Ինքնուրույն աշխատանքներ /ռեֆերատներ, թեմատիկ շնորհանդեսներ/:
- Ուսուցման ինտերակտիվ մեթոդներ /ցուցադրում, տեսացուցադրում, իրավիճակային խնդիրների լուծում, կլինիկական դեպքերի վերլուծություն, խմբային մեթոդ, հարց ու պատասխան և այլն/:

Հետազոտությունների հիմնական ուղղությունները և ձեռքբերումները

2021-2022 թթ. «Սոցիալական բժշկության» ամբիոնը հետազոտություններ չի իրականացրել:

1. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Այս ուղղությամբ ամբիոնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Գործողություն 1.1 Միջոցներ ձեռնարկել դասախոսական կազմի որակավորման բարձրացման ուղղությամբ

2021-2022 ուսումնական տարվա ընթացքում ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի նախաձեռնությամբ կազմակերպվել է անգլերենի B2 մակարդակի երկշաբաթյա վերապատրաստման դասընթաց /Հիմք՝ ամբիոնի վերապատրաստմանը մասնակցած դասախոսների գրանցաթերթիկ՝ Ա. Օվչյան, Հ. Հովհաննիսյան, Ա. Առաքելյան, Ս. Առաքելյան, Ա. Աղաբեկյան/:

Գործողություն 1.2. Ամբիոնի առարկայական դասընթացների թվայնացում, տեսանյութերի բազայի ստեղծում :

2021-2022 ուսումնական տարվա ընթացքում վերանայվել են «Սոցիալական բժշկություն» ամբիոնի առարկայական ծրագրերը և նկարագրերը, յուրաքանչյուր կիսամյակի քննական հարցաշարերը, թվայնացվել դասավանդվող դասընթացների ուսումնական նյութերը՝ դասագրքեր, դասախոսություններ, տեսաներկայացումներ /Հիմք՝ ԱԲՀ-ի էլ. գրադարանի, «Սոցիալական բժշկություն» ամբիոնի էլեկտրոնային և թղթային տարբերակով առկա թղթապանակները/:

Ուսումնական գծով պրոռեկտորի հանձնարարությամբ անգլերեն լեզվով են թարգմանվել ամբիոնի առարկայական ծրագրերը:

Գործողություն 1.4. Դասալսումների և դրանց քննարկումների բարելավում

2021-2022 ուստարում դասալսումները կատարվել են նոր մշակված ձևաչափով, որի շնորհիվ արտացոլվում են դասընթացի թույլ և ուժեղ կողմերը, ինչպես նաև դասալսողը հնարավորություն ունի առաջարկություններ և դիտողություններ անել դասալսվող դասընթացի վերաբերյալ:

2021-2022 ուստարվա ամբիոնում դասավանդվող բոլոր դասընթացներից իրականացվել են 16 դասալսումներ: Դասալսումների արդյունքները պարբերաբար քննարկվել են ամբիոնի նիստերին: Յուրաքանչյուր համատեղ քննարկմանը առաջարկվել են դասապրոցեսի նկատմամբ նոր մոտեցումներ, դասավանդման մեթոդների վերանայում, դասապրոցեսը լիակատար դարձնող մեթոդիկայի ընտրություն, առարկայի դասավանդման նկատմամբ անհատական և ճկուն մոտեցում, դասապրոցեսի բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավում /դասալսումները անց են կացվել հեռավար հարթակում /Հիմք՝ թիվ 4, 6, 10, 11 արձանագրությունները/: ՈԱ բաժին է ներկայացվել կատարված դասալսումների վերաբերյալ զեկույց:

Գործողություն 1.5. Ամբիոնի կադրային ներուժի բարելավում

2021-2022 ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվել է անգլերենի B2 մակարդակի վերապատրաստման երկշաբաթյա դասընթաց:

Գործողություն 1.7. Ամբիոնային աշխատանքների պլանավորում և համակարգում

«Սոցիալական բժշկություն» ամբիոնը 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում պլանավորել է ԱԲՀ-ում իրականացվող ուսումնագիտական աշխատանքները և դրանք

կատարել նշված ժամանակահատվածում: Ամբիոնի պլանավորված գործունեության համար հիմք են ծառայում տարվա աշխատանքային պլանը, օրացուցային պլանը, դասալսումների, հերթապահության, միջանկյալ ստուգարքների և քննությունների ժամանակացույցերը:

Յուրաքանչյուր քննաշրջանից առաջ վերանայվել, փոփոխվել, լրամշակվել են ամբիոնում դասավանդվող յուրաքանչյուր առարկայի քննական հարցաշարերը, տոմսերը, թեստերը՝ համապատասխանեցվելով ընթացիկ պահանջներին /Հիմք՝ 2021-2022 ուսումնական տարվա «Սոցիալական բժշկություն» ամբիոնի էլ. բազայում և թղթային տարբերակով առկա վերը նշված փաստաթղթերը/:

Գործողություն 1.9. Մասնակցություն ԱԲՀ-ի գիտական խորհրդի նիստերին

2021-2022 ուսումնական տարում «Սոցիալական բժշկություն» ամբիոնը մասնակցել է գիտական խորհրդի թվով 13 նիստերի: Առաջադրվող օրակարգի շրջանակներում տեղի են ունեցել քննարկումներ, ներկայացվել անհանգստացնող հարցերը և ուսումնական գործունեությունը բարելավող սեփական առաջարկություններ:

/Հիմք՝ «Սոցիալական բժշկություն» ամբիոնի արձանագրություններ/:

Գործողություն 1.10. Փոխադարձ դասալսումների պլանավորում և անցկացում

Հիմք ընդունելով 2021-2022 ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի դասալսումների ժամանակացույցը՝ իրականացվել են թվով 16 դասալսումներ «Ընդհանուր հոգեբանություն», «Բժշկական հոգեբանություն», «Հիգիենա», «Հանրային առողջություն», «Համաճարակաբանություն», «Ինֆեկցիոն հիվանդություններ», «ԱԻԲ», «Ֆթիզիատրիա», «Իմունոլոգիա, կլինիկական իմունոլոգիա» առարկաներից: Դասալսումների վերաբերյալ տեղեկությունները արձանագրվել են /Հիմք՝ «Սոցիալական բժշկություն» ամբիոնի դասալսումների ժամանակացույց և արձանագրություններ/:

2. ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գործողություն 2.3. Խորհրդատվությունների տրամադրման աշխատանքներ

«Սոցիալական բժշկության» ամբիոնի դասախոսների կողմից կազմակերպված խորհրդատվությունները կազմակերպվել են ոչ միայն յուրաքանչյուր դասախոսի հերթապահության գրաֆիկով սահմանված օրը, այլ նաև ըստ անհրաժեշտության: Խորհրդատվությունները պարտադիր անցկացվել են նաև յուրաքանչյուր միջանկյալ ստուգարքից, քննությունից առաջ՝ լրացուցիչ բացատրելու և քննարկելու անցած թեմաները, պատասխանելու ուսանողներին հուզող հարցերին:

/Հիմք՝ «Սոցիալական բժշկություն» ամբիոնի 2021-2022թթ. խորհրդատվությունների մատյանվությունների մատյան/:

3. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գործողություն 3.4. Ընդլայնել ամբիոնի դասախոսական կազմի կողմից հրատարակվող գիտական հոդվածների քանակը:

«Սոցիալական բժշկություն» ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից 2021-2022 ուսումնական տարում գիտահետազոտական աշխատանքներ չեն իրականացվել:

4. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Գործողություն 4.1. Ուսանողների հետ հետադարձ կապի ապահովման բարելավում:

«Սոցիալական բժշկություն» ամբիոնը 2021-2022 ուսումնական տարում մշտապես պահպանել է ուսանողների հետ հետադարձ կապը: Քննարկումների առարկա են հանդիսացել ուսանողներին հուզող տարաբնույթ խնդիրները, ուսանողների մոտ ուսման նկատմամբ մոտիվացիայի զարգացումը, ուսումնական գործընթացը առավել արդյունավետ կազմակերպելու ուղիները: Դասախոս-ուսանող հետադարձ կապը համակարգվել է ամբիոնի վարիչի կողմից:

Գործողություն 4.2. Մասնակցություն ներհամալսարանական ՈԱ միջոցառումներին:

«Սոցիալական բժշկություն» ամբիոնը 2021-2022 ուսումնական տարում մասնակցել է ԱԲՀ-ի ՈԱ պատասխանատուների կողմից կազմակերպված հանդիպումներին, մասնակցել ՈԱ գործընթացներին վերաբերող քննարկումներին:

Ամբիոնի նիստերին քննարկվել են ամբիոնի մշտադիտարկման արդյունքները և, որպես բարելավում, կարող ենք առանձնացնել ամբիոնի համալրումը ուսումնական աշխատանքների գծով 1 աշխատակցով:

Ամբիոնում քննարկվել և առաջարկություններ են ներկայացվել ուսումնական գործընթացն ապահովող ռեսուրսներից ուսանողների շրջանում անցկացված հարցման արդյունքների վերաբերյալ:

Ուսումնական գործընթացի որակի բարելավման նպատակով «Սոցիալական բժշկություն» ամբիոնը առաջարկում է լսարանները համալրել նյութատեխնիկական առավել ժամանակակից պարագաներով՝ հզոր համակարգիչներ, մասնագիտական մասնագիտացված լսարանները անհրաժեշտ գործիքակազմով՝ գործնականում օգտագործելու նպատակով:

Ամբիոնի վարիչը և 4 դասախոսներ մասնակցել են անգլերենի վերապատրաստման դասընթացին:

«Սոցիալական բժշկություն» ամբիոնի վարիչ՝ հ.գ.թ. Ա.Ա.ՕՎՉՅԱՆ

Պաշտոնական փաստաթուղթը գտնվում է համալսարանում